ցածը՝ մասնաւոր անհատների։ «Տեղացիներից գլխաւորապէս հայ վաճառականներն են մեծ տնատէրերը»։ Քաղաքի եկեղեցիների թիւը եղել է 42, «բնակչութեան համեմատութեամբ չափէն աւելի շատ»։ Դրանից 23–ը հայ լուսաւորչական, 12–ը վրացական, 4–ը ռուսական, 2–ը յունական, 1 էլ հայ–կաթոլիկական։

Թիֆլիսը մի քանի լաւ վարժարաններ ունի, ասում է Վագներ։ Դրանց թւում են եղել՝ քաղաքի գիմնազիան եւ օրիորդաց վարժարանը։ «Ինձ ասացին, որ հայ աղջիկները իրենց ջանասիրութեամբ եւ ընդունակութեամբ ամէն կողմով գերազանցում են ռուս եւ վրացի աղջիկներին»։

Վագներ յիշատակում է նաեւ քաղաքի գիւղատնտեսական դպրոցը, հիմնուած բարոն Ռոզէնի օրով։

Մասնաւոր դպրոցներից Վագներ մեծ գովասանքով նորէն խօսում է Աբովեանի վարժարանի մասին եւ գրեթէ բառացիօրէն կրկնում այն գնահատական խօսքերը, ինչ ընթերցողը արդէն կարդացել է այս յօդուածի առաջին գլխում։ «Դժբախտաբար այդ գովական մասնաւոր դպրոցը վերջ գտաւ դեռ Թիֆլիսից մեկնելուց առաջ՝ պ. Աբովեանն ուրիշ տեղ նշանակուած լինելու պատճառով»։

Զարմանալի է, որ ոչ Վագներ, ոչ էլ Բոդենշտէդտ ու Հաքստհաուզէն յիշատակութիւն չեն անում Ներսիսեան դպրոցի մասին։

Թիֆլիսի բնակիչների թիւը 1842–ին, 26,–000 չունչից աւելի էր, պաշտօնեաները եւ զօրքը չհաշուած»։ Վագներ ցաւ է յայտնում, որ ռուսների հրատարակած վիճակագրական տախտակի մէջ թուեր առաջ չեն բերուած ըստ ազգութեանց։ «Լաւ աղբիւրից տեղեկացայ սակայն, որ հայերը աւելի մեծաքիւ են, քան բոլոր միւս ազգութիւնները՝ միասին առած, կազմելով ընդհանուր բնակչութեան երեք հինգերորդից աւելի»։ Եւ սակայն քաղաքի իշխող լեզուն վրացերէնն է»։

Ազնուականների թիւը ողջ բնակչութեան գրեթէ մէկ տասներորդ մասն է կազմել, իսկ իշխանական տոհմի շառաւիղների թիւը՝ 300։

Բացի հայերից ու վրացիներից՝ Թիֆլիսի բնակչութիւնը բաղկացած է եղել նաեւ՝ թաթարներից, պարսիկներից, տաճիկներից, օսերից, չէրքէզներից, լեզգիներից, կարիկումիկներից, լազերից, սվաններից եւ քրդերից։

Վագների գրքի մէջ հանդիպում ենք մի շարք տեղեկութիւնների քաղաքի տնտեսական ներքին կեանքի մասին։ Այդ ամէնի վրայ սակայն անկարող ենք ծանրանալ այս յօդուածի մէջ։

Ամփոփելով մեր խօսքը պիտի ասենք, որ Վագների աշխատութիւնը («Ուղեւորութիւն») մեր երկրի եւ ժողովուրդի 1840–ական թուականների կեանքը ուսումնասիրելու համար կարեւորագոյն օտար աղբիւրներից մէկն է։ Մասնաւորապէս նրանով է բարձրանում գրքի արժէքը, որ նա հարուստ տեղեկութիւններ է պարունակում Հայաստանի բնապատմութեան մասին։

Արժէքաւոր են նաեւ հեղինակի՝ Վրաստանին վերաբերեալ աշխատութիւնը, ինչպէս նաեւ «Ուղեւորութիւն դէպի Պարսկաստան եւ քրդերի երկիրը» գրուածքը (Լայպցիգ, 1851 թ., երկու հատոր)։